

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 1

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2022-2023 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

23 սեպտեմբերի 2022թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 16-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցը: **Ձեկուցող՝** Ս. Վարդապետյան
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտ Անի Չախոյանի՝ Ֆարմաեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի հայցորդ ձևակերպման հարցը: **Ձեկուցող՝** Ա. Դադայան
3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը: **Ձեկուցող՝** Ա. Դադայան
4. Ընթացիկ հարցեր
- 4.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակազնոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարփի Սիմոնյանի «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով թեմայի տարեկան հաշվետվության հաստատման հարցը: **Ձեկուցող՝** Հ. Սիմոնյան

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցը:

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ Ս. Վարդապետյանին, ով հաղորդեց, որ լրացել է Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի լիազորությունների

ժամկետը և ԵՊՀ ռեկտորի հաստատմանը պետք է ներկայացնել գիտական խորհրդի նոր անվանացանկը: Ս. Վարդապետյանը հավելեց նաև, որ Կենսաբժշկագիտության ամբիոնի նախկին վարիչ Արմեն Մանուկյանի փոխարեն ի պաշտոնե պետք է ընդգրկվի Խաչիկ Մուրիկի Հակոբյանը, իսկ ուսումն ավարտելու պատճառով շրջանավարտներ Էմմա Մարկոսյանի, Աննա Մարգարյանի և Անի Խաչատրյանի փոխարեն ֆակուլտետի ուսանողական խորհրդի կողմից առաջադրվել են Ռուբեն Իսրայելյանը, Նոյեմի Սաֆարյանը և Հեղինե Օհանջանյանը:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ Ա. Մկրտչյանը, ք.գ.թ Ա. Գեոլչանյանը Ս. Պետրոսյանը, ք.գ.թ Կ. Պետրոսյանը, ք.գ.թ. Ժ. Սարգսյանը, ովքեր կողմ արտահայտվեցին նշված անձանց թեկնածություններին:

Որոշեցին՝ (միաձայն) Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նոր անվանացանկը ներկայացնել ԵՊՀ ռեկտորի հաստատմանը:

2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտ Անի Չախոյանի՝ Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի հայցորդ ձևակերպման հարցը:

Լսեցին՝ Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանին և գիտքարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին: Ա. Հովհաննիսյանը ներկաներին տեղեկացրեց, որ ամբիոնի հայցորդ ձևակերպվելու համար դիմել է ինստիտուտի շրջանավարտ և աշխատակից Անի Արթուրի Չախոյանը: Ա. Դադայանը հավելեց, որ Անի Չախոյանի կողմից ներկայացվել են հայցորդ ձևակերպվելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ ք.գ.թ Ա. Մկրտչյանը, ք.գ.թ Հ. Սիմոնյանը ք.գ.թ Ա. Ափոյանը, ք.գ.թ. Ժ. Սարգսյանը, ովքեր կողմ արտահայտվեցին Ա. Չախոյանին հայցորդ ձևակերպվելուն՝ կարևորելով ինստիտուտում բնականոն սերնդափոխության համար երիտասարդ կադրերի պատրաստումը:

Որոշեցին՝ (միաձայն) ձևակերպել Անի Արթուրի Չախոյանին՝ որպես Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի հայցորդ:

3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը: Զեկուցող՝ Ա. Դադայան

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ներկայումս Նազելի Չարչյանի և Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակ են ստանում «Ֆարմացիա» մասնագիտության բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ Աննա Արմենի Գասպարյանը և Սոնա Ահարոնի Եգորյանը, ովքեր գերազանցությամբ շարունակում են իրենց ուսումը: Ա. Դադայանը տեղեկացրեց, որ Սոնա Եգորյանը ցանկություն է հայտնել մասնակցել Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի ուսանողների համար «Լիկվոր» և «Արփիմեդ» ընկերությունների կողմից սահմանված անվանական կրթաթոշակների մրցույթին և հրաժարվում է Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակից, ուստի անհրաժեշտ է ներկայացնել մեկ այլ ուսանողի թեկնածություն՝ Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակի համար: Ելույթ ունեցան գիտխորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Հ. Սիմոնյանը, Ս. Պետրոսյանը, ովքեր առաջարկեցին «Ֆարմացիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Հեղինե Ստեփանի Օհանջանյանի թեկնածությունը, ով չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմությամբ շարունակում է իր ուսումը (ՄՈԳ>19):

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

1. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Աննա Արմենի Գասպարյանի՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը:
2. Ներկայացնել «Ֆարմացիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Հեղինե Ստեփանի Օհանջանյանին՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակի:

4 Ընթացիկ հարցեր

4.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարփի Սիմոնյանի «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով թեմայի տարեկան հաշվետվության հաստատման հարցը:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. Հայարփի Սիմոնյանին, ով համառոտ ներկայացրեց «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով թեմայի տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվությունը ներառում է ՀՀ պետական բյուջեից գիտական եվ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ կատարված թեմայի շրջանակներում ստացված արդյունքները:

Հ. Սիմոնյանը նշեց, որ գիտական թեմայի հետազոտական աշխատանքներն իրականացվել են ըստ նախօրոք հաստատված օրացուցային պլանի:

Հաշվետու ժամանակաշրջանում հետազոտվել են նիկելի դեհիդրոամինաթթվային կոմպլեքսներին հետերոցիկլիկ նուկլեոֆիլների միացման ռեակցիաները, ինչի արդյունքում սինթեզվել են էնանտիոմերապես հարստացված նոր ոչ սպիտակուցային ամինաթթուներ, որոնք Իտալիայի Նեապոլ քաղաք գործուղման ընթացքում փոխանցվել են «Կենսակառուցվածքների և կենսաիմիջինգի» ինստիտուտի կենսաբանական սկրինինգի լաբորատորիա՝ հակաքաղցկեղային հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Ոչ սպիտակուցային ալֆա-ամինաթթուների և պեպտիդների վրա հիմնված համակարգերի սինթեզ և կենսաբանական գնահատում» վերնագրով թեմայի տարեկան հաշվետվությունը:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ., դոցենտ

Ս. Վարդապետյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ

Ա. Դադայան